ռում դրեթէ բոլոր այն երկիրները, որ պատկանում են վրաց Բագրատունիներին, եւ անգամ դրաւել էր Դարհալի պահակը պաշտպանող ամրոցը, ասել է թէ հիւսիսային սահման էր Կովկասեան շղթան: Սմբատը նայում էր Ատրներսեհի վրայ, որպէս միեւնոյն ընտանիքի անդամի: Հակառակ կրօնական խտրութեան Ատրներսեհ հնարաւոր էր գտնում Զատիկը անցնել Սմբատի մօտ եւ նրա հետ միասին: Սմբատ եւ Ատրներսեհ՝ երկու եղբօր թոռան թոռներ էին. բացի դրանից՝ Ատրներսեհ Սմբատի հօրաքրոջ թոռն էր:

IX

Նոյն ատեններն էր, որ թագ կապեցին նաեւ Աղուանքի Բագրատունիները:

Տեսանք, որ Սահլ Սմբատեանը մատնելով Բաբակին, արժանացաւ ամիրապետի առանձին ուշադրութեան: Նրա որդին տարաւ Բաբակին յանձնեց արաբ զօրավարին եւ ստացաւ դրամական պարգեւ: Արաբական մատենագիր Տաբուրի տալիս է նաեւ Սահլի որդու անունը՝ Մուաւիա:

Այդ ժամանակները սովորութիւն էր դարձել, որ հայ իշխանները կրկնակի անուններ էին առնում, զուտ աղգային եւ արաբական, ինչպէս եւ Բիւզանդիայում հայկական անուան կից ունէին եւ յունական անուն: Ի՞նչ էր Մուաւիայի հայ անունը:

Կաղանկատուացու նորագիւտ հատուածի մէջ, ուր խօսքը Սահլի մասին է, յիշւում է «Յովհաննէս տէրն տէրանց, որ հայոց, վրաց եւ աղուանից եղեւ տէր»: Բնական է կարծել, որ այս Յովհաննէսը Սահլի որդին է նոյն Մուաւիան, կամ նրա եղբայրը:

Թւում է թէ այս անձը նոյնն է, որ կոչւում է Համամ: Մխիթար Այրիվանեցին 320=871 թուին յիշում է «Համամ, որ եւ Յոհանէս Բագրատունի»: Կարեւոր յայտնութիւն, որով Աղուանից յայտնի Համամ թագաւորը նոյնանում է յիշեալ Յոհանէսի հետ: Յովհ. Կաթ. կոչում է Համամին մեծ իշխան Արեւելից եւ պատմում է, որ երբ Գէորգ կաթողիկոսը Սմբատ թագաւորի պատուէրով գնաց Ատրպատականի իշխան Ափշինի մօտ հաշտութեան նը-պատակով, Ափշին ձերբակալեց կաթողիկոսին եւ ազատելու համար փրկանք էր պահանջում: Հայ եպիսկոպոսները դանձեցին հարկաւոր դումարը եւ խնդրեցին Համամի միջնորդութիւնը, որ իր կողմից աւելացրեց դրամը եւ ազատեց գերուած հայրապետին:

Կաղանկատուացու գիտութեամբ, Ափշինի յարձակումը եւ կաթողիկոսի կալանաւորումը տեղի ունեցաւ հ. 342=893 թուին: Եւ ազատողը Համամն էր «որ եւ Աղուանից եղեւ թագաւոր»: Այս խօսքերից չի երեւում, թէ Համամ յետոյ թագաւոր եղաւ թէ արդէն թագաւոր էր, մանաւանդ երբ աւելացնում է, որ ինչպէս Աշոտ Բագրատունին նորոգեց հայոց թագաւորութիւնը, այնպէս էլ Համամը՝ Աղուանից. «այսք ի միում ժամանակի գործեցան», այսինքն՝ Թ. դարի վերջերին, բայց դժուար Աշոտի հետ միաժամանակ: Ատրներսեհ վրաց իշխանը թէեւ 15 տարի ուշ քան Աշոտը թագ կապեց, կարելի է ասել, «ի միում ժամանակի»: Ասողիկը թագաւոր է անուանում Համամին, Գէորգ կաթողիկոսի ազատութեան մասին խօսելիս (Գ. 3):

Աղուանից պատմագիրը մի նկատողութիւն է անում, որ արժանի է ուշադրութեան: Համամ մեծ յանցանք էր գործել, «վասն սնոտի կենացս զպարտ արեան եղբօրն Ժողովեալ յանձին իւրում»: Ասել է թէ Համամը սպանել էր իր եղբօրը, թերեւս, իշխանութիւնը ձեռք ձգելու համար: Ո՞վ էր սրա եղբայրը, յայտնի չէ: Արդեօ՞ք Մուաւիա եւ Յովհաննէս տարբեր անձեր չեն եւ եղբայրներ. եւ զոհը Մուաւիան չէ՞: Դժուար է ենթադրութիւնից այն կողմն անցնել:

Խաչիկ վարդապետը, որին պարտական ենք Կաղանկատուացու հատուածի յայտնաբերութիւնը, հաղորդում է որ Մեծարանց Ս. Յակոբի վանքում կայ մի արձանագրութիւն, ուր յիշւում է Յովհաննէս իշխանի անունը, եւ որ աւելորդ չենք համարում բերել այստեղ.

ՅԲ թուականութ
են հայր ի ժամանակ
Յովանիսի Աղվան(ից)
իշխանի ես Սողոմ(ոն)
Մեծարանց եպիսկ(ոպոս)
կանգնեցի զս... (Արարատ, 1897, Ապրիլ):